

պէս տեսանք, Պարսկա: տանի մաք- սերը գրէթէ մեծ մասամբ անոնց ձեռքն են, նոյնպէս դրամական ամ- նամեծ հաստատութիւնը՝ Պարսկա- կան պանքան, հնդկաեւրոպական հեռագիրը, երկրին վաճառականու- թիւնը: Մէկ քանի տարի առաջ ալ ձեռք բերին Պարսկական թէյի պէտքի եւ ծխախոտի բէթին, սակայն այս մենաշնորհը Պարսկաստանի մէջ ա- հագին չփոթութիւններ յառաջ բե- րաւ ուսական կառավարութեան թելադրութեամբ եւ վերջապէս ջըն- ջուեցաւ: Բէթի մենաշնորհին այս ջնջումը Անգլիացիներուն համար մեծ պարտութիւն մըն էր եւ ուսերուն համար նոր յաղթանակ մը:

Անգլիացիներուն Պարսկաստանի մէջ ձեռք բերած քաղաքական ազդե- ցութիւնը սկարացնելու համար, ուսերը օգուտ քաղեցին անցեալ տարի թաւրթի մէջ տեղի ունեցած իրաւունքութիւններէն, եւ հայկա- կան կոտորածի մը սպառնական հան- գամանքը ընծայելով այդ խառնա- չփոթութեանց, զիտով ուղղով գոր- ծին մէջ մտան եւ հայերուն պաշտ- պան կանգնեցան: Այս միջամտու- թեան շնորհիւ ուսերը պաշտօնա- պէս ձեռք բերին հայերը պաշտպա- նելու իրաւունքը. այսու ջնջած եղան թիրախեցան յաշնագրին այդ յօդ- ուածին արամագրութիւնը, որով անգլիացիները հայերը պաշտպանելու իրաւունքը կը վայելին:

Վերջերս ուսերը ուղեցին հիմ- նել ազգային պանքա մը, մրցելու համար անգլիացիներուն նոյն կարգի հաստատութեան դէմ (the Imperial Bank of Persia), սակայն կարծեմ ի- րենց այս փորձը չը յաջողեցաւ:

Վերջապէս՝ արեւելքի եւ ծայրա- գոյն արեւելքի մէջ խուլ եւ սպառ- նական հանգամանք ունեցող մրցում մը կայտարարուեց եւ անգլիացիներուն մէջ, եւ այս մրցումը վերջերս այնքան մեծ ծաւալ սկսած է առնել, որ կա- րող է առաջնորդել եւրոպական ընդ- հանուր պատերազմի մը, եւ այս ալ պատճառ պիտի ըլլայ մեծ յեղաշրջում մտցնելու աշխարհի ընդհանուր կարգ ու սարքին մէջ:

Դոկտոր Կ. Յ. Փաշաեան
—)(—

ՎԱՐՊՊՈՍԵՐԻՈՒԹԻ ԳԵՆԱՏԱԿԱՐԱՆԸ (28)

էլ չը խուզարկեցին: Մի կողմէ կանչեցին, ինձ գրին մէջը. մէկ կողմէ կողքիս նստեց, գաղտնի ոտիկաններէն միւրը դիմացս, միւ- րը կտուրպանի կողքին եւ կողքը սլացաւ: Ուր էին տանում, ինքս էլ չը գիտէի. ես զբաղուած էի գր- պաններս պարելով եւ այնտեղ գրու- նված թղթերը մանր մանր պատու- տելով: Եւ երբ այդ թղթի կտորնե- րը քիչ քիչ հանում էի ու կողքից դուրս նետում, նրանք կատաղում էին, ուզում էին արգիլել. իսկոյն ձեռք տանում էի ատրճանակին, ինդ- ձեռք բարկանում էին, որովհե- տեւ չէին կարող ամեն տեղ կանց աննել եւ այդ մանրիկ կտորները հաւանքել: Մինչեւ նախարարատուն հասնելը, բաւական թուղթ ոչնչա- ցրի նոյն իսկ ոտիկանների աչ- քերի առաջ... միայն վճռագիրը չկարողացայ ոչնչացնել որի ծրարի վրա դիմամբ կնոջ անուն էի գրել: Երկար ու բարակ գնալուց յետոյ, զերջապէս հասանք ոտիկանութեան նախարարութիւնը: Ինձ ուղեկցող

ՃԱՐՐՈՐԴԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԻՅ

Յուրտ, քամի եւ մուսլ մի ե- ղանակ է: Կառքս մօտենում է ուսական սահմանագլխին: Վեց եօթ օրուայ ճամբորդութիւնս կատարել էի շատ գեղեցիկ գար- նանային եղանակով. կարծես ընթացքը ուղում էր համեմատա- լիներ իմ ներքին աշխարհի հետ, որը հետզհետէ սեղմվում էր ու սահմանափակվում՝ որքան սահմա- նափական ազատ երկրներէն մօ- տենում էի մարմնացած միտայե- տութեան եւ ամէն մի լայն միաք ու լայն սիրտ կաշկանդող սեղ- մող երկրի սահմաններին:

Կառապանս մի ուսու գլարթ եւ շատախօս պատանի էր. շարու- նակ խօսում էր եւ միամիտ միա- միտ հարցեր տալիս. իսկ ես միայն երբեմն կարճ ու կարուկ պատասխաններ էի տալիս, ու- ըրովհետեւ մտքով ուրիշ տեղ էի: Վերջապէս հասանք Պրուտ գե- տի փոքրիկ մաքսատունը. այն- տեղ ոտիկան եւ ժանտարմ չկայ. հասարակ զինուորը վերցրեց քու- ֆրս եւ ինձ էլ ներս հրաւիրեց:

Սենեակում հանդիպեցի կրկին նոյն կառավարչին, որին տեսել էի սրանից մի քանի տարի ա- ռաջ. մի ձերուկ լայն ու ան- ճոռնի դէմքով, խոշոր ուսական եւ կէսը, արալի շատ գործածե- լուց, կարմրած քթով պաշտօնեա: Այս անգամ մի բան էլ աւելացել էր. աչքերը կորցրել էին իրանց սրութիւնը, իսկ մեծ գլուխը օ- ռորվում էր հաստ վզի վրա՝ երբ պաշտօնավարութեան օրերը համ- րուած այդ հին աղուէօր խօսում էր: Բայց նրա մօտ նստած էր մի ուրիշը, գեւա բաւական երիտա- սարդ, որի ախնոցի սպիտակ ա- պակիների միջով երեւում էին սուր ու ներս թափանցող արդու- սային աչքերը. ինչպէս երեւում

է սա նշանկված է պառաւած արգոսի աչքից փախածը դիտե- լու եւ բռնելու:

Նստել էի ինձ քաղաքավարու- թեամբ առաջարկված աթոռի վը- րա. նա դիտում էր անցագիրս, իսկ ձերուկի պաշտօնեան եւս նայում էինք իմ քուֆրին, որի գլխին կանգնած էր խուզարկող պաշ- տօնեան: Յանկարծ պառաւի աչ- քին ընկաւ մի քանի հատ գրքեր. դրանք հասարակ վէպիկներ է- թին որ ես վերցրել էի ճանա- պարհին չձանձրանալու համար: Գրքերը հանեցին. ձերուկը գլուխը շարժելով ասեց.

— Գրքեր չէ կարելի տանել: — Բայց այդ գրքերը բոլոր- վին անմեղ վէպեր են. նրանցից շատ կը զանէք եւ Ռուսաստանի գրավաճառների մօն, յայտնեցի ես:

— Այնու ամենայնիւ չէ կարե- լի, մենք չենք կարող այն եր- կիրներէ հրատարակութիւնները ընդունել, ուր գրաքննիչ չկայ: Եթէ ուղում էք հասցէ տւէք, մենք գրքերը կուղարկենք ցեն- ղուրին, այնտեղից կտանաք, կամ թէ չէ ամտեղից վերադառ- նալիս հետներդ կը տանէք:

— Լաւ, թո՛ղ ձեզ մօտ մնայ, ե- թէ այս կողմով անցայ, կը վեր- ցնեմ:

Այդպիսով ամէն բան վերջա- ցաւ. անցագիրս ետ ստացայ եւ ճանապարհս շարունակեցի. մի ժամից յետոյ արդէն երկաթու- ղու վագօնի մէջ էի. կամաց կա- մաց սեղմվում էի, ճնշվում, կծ- կվում եւ դառնում միապետական մի կամքի եւ քմահաճոյքի հնա- ղանդուղ երկրի ընակիչ:

Այդպէս դառնալուն աջակցում էին փոքրիկ կայարաններում գտնուող ժանտարմները ու ոտի- կանները, որոնք ամէն մի նոր դէմքի վրա նայում են որսորդի

սուր աչքով: Վազոնում ինձ հետ գտնվում էին մի երկու կարածատէր ցո- րենի վաճառական եւ վաշխառու տարէց ուսներ: Կար եւ մի մի- ջին տարիքով բուլղար վաճառա- կան, Բեսարաբիոյ բուլղարնե- րից: Այդ պարոնները առաջի վաղրիկաններում խօսում էին իրանց ստացված քնքերի եւ եկա- մուտների մասին. վերջը անցան ուսմանը:

Ռուսները սկսեցին պախարա- կել ուսումը. յայտնել որ առանց ուսումի էլ կարելի է բարել, դրան ապացոյց էին բերում որ իրանց հայերը եւ իրանք՝ ա- ռանց մեծ ուսման կարողացել են ահագին հարստութիւն դիզել, այն ինչ հիմա ուսում առած երի- տասարդները անգործ թափա- ռում են եւ պարապութիւնից կա- ռավարութեան հակառակ՝ յիմար գործերով են զբաղվում. պատ- ժվում, անբախտանում եւ ան- բախտացնում իրանց ծնողներին ու նրանց բոլոր աշխատանքը ու տի սակ տալիս:

Բուլղար վաճառականը հակա- ուսում էր եւ ազատ ուսումը պաշտպանում. յանկարծ հարցը անցաւ քաղաքականութեան, եւ մասնաւորվեց Բուլղարիայով: Երբ ուսները հայհոյանք էր որ սեղացին ապերախտ (°) Բուլ- գարիոյ վրա: Բուլղարը տաքացաւ եւ սկսեց շերտութեամբ իր հայ- րենիքը պաշտպանել: Ես լրբու հանդիսատես էի. իհարկէ իմ համակրանքս բուլղարի կողմն էր. հրճվում էի տեսնել թէ ինչ- պէս երեկվայ սորուկը իր գա- ղախարներով աւելի բարձր եւ ա- լելի թարմ էր իրան ազատող եւ այսօր ահեղ մի ուժ ունեցող ցե- ղակից ազգի զաւակներէն:

—)(—

աչքի առջեւ...

Վերջապէս մի ժամից աւել սպա- սելուց յետոյ, եկաւ կոմիտէրը դուրս տարաւ ինձ եւ կողքով տարաւ ուսուսաց հիւպատոսբան: Հենց որ ներս մտայ, փոխ հիւպատոսը, մի անհամակրելի, խորամանկ մարդի դի- մագօծերով եւ պրտայայտութիւնով պարօն, յետոյ խորխտ եւ աւելի անկեղծ ու խիստ արտայայտու- թեամբ Մաքսիմովը շրջապատեցին ինձ եւ հրամայեցին խուզարկել: Խուզարկում էին թուրքերը, նրանց ուղեց օգնել փոխ հիւպատոսը եւ բաւական կոպտութեամբ. այդ տեղ բարկացաւ եւ մի քանի խիստ խօս- քեր ստելով շարժում արի փանա- րնս հանելու. փոխ հիւպատոսը ամա- չեց, ինքը ես քաշվեց եւ միւսնե- րին էլ պատուիրեց քաղաքավարու- թեամբ վարվել:

Ռուսական պաշտօնեաների այդ չափով խստութիւնը ինձ համոզեց որ նրանք ինձ ընդունում են եւ իբր ուսու յեղափոխական, մանաւանդ երբ նկատեցի որ իմ աւած պա- տասխաններին բաւական կծու եւ դառը հեզութեամբ էին վերաբե- րում:

Այդ տեղ վճանցի միանգամից որո- չել իմ գիրքը ուսուսաց կառավարու- թեան վերաբերմամբ եւ խիստ ան- կեղծ շնչով ասացի.

— Պարոններ, ես Ռուսաստանում ոչ մի բանում մեղադրված չեմ եւ ոչ մի քայլ չեմ արել հակառակ ուսա- կան բէթիմի: Ես միշտ հաւատարիմ հպատակ եմ եղել ուսական կառ- վարութեան, գոնէ գործնական կեանքիս մէջ:

Փոխ հիւպատոսը պատասխանեց. — Եթէ այդպէս էր, ապա Պոլսո գալով դուք փնջու՞մ մեզ չը ներկայե- ցաք եւ ձեք անցագիրը չը վաճառե- ցրիք: Եթէ դուք կասկածելի չը լի- նէիք այդպէս չէիք վարվել:

— Ես պէտք է գայի, բայց երբ մա- ցացայ թէ թուրքերը արդէն իմացի- ւ են իմ այստեղ գալս եւ ձեզ յայտնելը որոշեցի չը ներկայանալ, համարվե- լինելով այդ պէպով որ դուք քննա- ճառ ինձ կը հետաքննէիք այս տեղից, որով եւ իմ գալս բոլորովին ապար- ղիւն կը լինէր. դրա համար էլ որո- շեցի ինձ բախտին յանձնել:

(Շարունակվի)

Օ Ր Ը Օ Ր Ի Ն

«ԱՐԵՒԵԼԸ»

—)(—

«Մասին»ի վերջին թիւը մեզ կաւետէ իր անհետացումը օրագրական ասպարեզէն, ու վերերեւումը «Արեւելք»ին: Ասով չի կարծուի թէ Պոլսի մամուլը բարեփոխում մը կամ ու է յեղաշրջում կը կրէ: Բնաւ: Պարզապէս փոփոխում մը խորագրի, գրաչարական դարձումք մը, ու լինցաւ: «Մասին»ին «Արեւելք» կը յաջորդէ:

Բայց աս պարզ ու անաշխատ փոփոխութիւնն իսկ յուզում մը, ցնցում մը պատճառելու հանգամանք ունի, անոր համար որ մենկութեան մատնուած անուն մը, «Արեւելք», յանկարծ կուգայ յիշեցնել լրագրական գործունէութեան բաւական փոթորկալից ու տաք շրջան մը, ամբողջ շարք մը տասերկու տարիներու, որոնց միջոցին այս օրաթերթը ամէն գոյնով, ամէն երեւոյթով, ամէն տարազով փոխանիւստ եկաւ անցաւ գրեթէ բովանդակ հայութեան մտքին ու աչքին առջեւէն, խորափոր ակօսներ ձգելով իր ետեւէն:

«Արեւելք» իր հին շրջանին մէջ՝ երեք դեր կատարեց. իր գոյութեան առաջին ութ տարիները բամբակեղ Պոլսի նորաստեղծ ու բազմերանգ գրականութեան. պահպանողականութիւնը ներկայացուց իր ամէն խիտ ու թանձր երեւոյթներուն տակ, վերջապէս արտա խաղալիկն եղաւ Պոլսի տիրահոլակ ազնուականութեան և, նոյն հետեւանքով, ազգային զիկտատորական վարչութիւններուն:

Իրնայ ըսուել թէ այս երբեակ դերին մէջ քաջ ու յարատեւող հանդիսացաւ «Արեւելք», բայց հետզհետէ բորբոսելով, գոսանարով, փտութեան ու տարբարագրութեան ամէն կանոնաւոր շրջանները իր մէջ պատկերացնելով:

«Արեւելք» խափանեց ազատամտութեան ամէն ձգումը. շոջերու խմբակը այնպէս կուտ գարբնած էր զայն որ միշտ ծանրաձայլ լախաբի մը պէս իջաւ իր շուրջ յուզուած ամէն առաջգիմական, արմատական ժայթքումներու վրայ, խղճելով ամէն բողբոջ ամէն սրտունջ:

Մեր մամուլի պատմութեան մէջ, երբ օր մը մանրամասն արձանագրուի ան, «Արեւելք» լայն տեղ պիտի գրաւէ, բայց իր առջի երկտասանամեակը գգուող ու փայլուն քննադատութեան մը առարկայ չպիտի կրնայ ըլլալ: Երբ արտա տիրուր գերք մը պիտի գրաւէ «Հայրենիք»ի կարծ լայց լեցուն կեանքին քով, որ չորս տարի շարունակ շեղմացուց թուրքիոյ հայութիւնը:

Իժուար չէ գուշակել թէ իր այս երկրորդ շրջանին մէջ ինչ գոյն և ուղղութիւն պիտի ունենայ «Արեւելք» կրնանք հիմակուց հաստատել թէ անոնք տարբեր պիտի ըլլան իր առջի շրջանէն. հիմակ «Մասին»ի մորթըն հագնելով բան մը կը կորսընցունէ իր ինքնութենէն ու եղականութենէն: «Արեւելք» այլ եւս պահպանողական օւկան մը չպիտի ըլլայ. ազատական սլացքներ ալ չպիտի ունենայ, անգոյն անճանաչ բան մը պիտի ըլլայ, ու իր միակ յատկանշանական կողմը պիտի կազմէ ան գրական հոսանքը սր արդէն սկսած էր տիրել «Մասին»ի մէջ: «Արեւելք» պիտի կարգացուի ցորչափ Ձօհրապ, Սիպիլ և Թըլկատենցի շարունակեն հոն ցուցադրել իրենց ազամանդեայ գրականութիւնը: Բայց ան օրը երբ ասոնք հեռանան անկից, հայութիւնը նորէն պիտի ունենայ իր հին, ծթուած, փտախտաւոր «Արեւելք»ը, իր մարմնին վրայ փակած ունենալով Պոլսի ազնուականութեան (ն) պլոզգալի տղորդները:

ՇԱՒԱՐԸ

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

—)(—

Մարտիկոյ խանութ-քերթիւն. — Մարտիկական փոռնքէն, իր ողջ ըլլալը ապացուցանելու համար, բորբոսած բրածոն ազուաւ կոխնչ մըն ալ կը համարձակի արձկել Շարժուելի դէմ, կերեւի ընդհանուր գատափետուի փոռքէն չըրկուելու համար: Մարդ կը զարմանայ երբ աշխարհի ամէնէն վարնոց ու անուանարկ խաբեբանքէն մէկուն բերնին մէջ կը անսնէ ազգասիրութիւն, հայրենեաց փրկութիւն և ալ ասոնց նման բաւեր, որոնց արտասանուելու շեղքը արդէն բացայայտ ցոյց կուտայ սակայն թէ անոնք գրամ շրթիւնը, վարպետութեամբ ազգը կապուելու կողպտելու խաձեր են:

Ատանց ֆրանսացիներու գիտութեանը, տասերկու տարիէ ի վեր Մարտիկոյ փոռնքը իր ներկայութեամբ ազոտած ու նախատած այս կեղծ հայրենասէր խաբեբան հիմակ բառարաններու կը դիմէ Շարժուել խճճելու համար: Մեր արհամարհանքը միայն այս խղճողորմելի թշուառին, որուն մտային զբսպանակները վերջնապէս խզուած կոտորած կերեւան: Կը խղճանք գանձանակով ու ծանուցումով ազգէն փարա մուրացող այս անտանելի ու անպատկառ մարդուկին վրայ, եւ այս մէկ քանի տողերը վերջնական կերպով իրեն կուղղենք՝ գիտնալով հանդերձ մեր ըրած այս զոհողութեան աստիճանը:

—Բէտօթէնձէի մեր բաժանորդներուն կը ծանուցանենք թէ Պ. Փոլ ձիկրեան յօժարած է ստանձնել սոյն քաղաքին մէջ Շարժուելի գործակալութիւնը:

—)(—

Ք Ր Ո Ն Ի Կ

—)(—

Ասկէց առաջ գրած էինք Գահիրէի Պօղոս Կարապետեանի կըտակի մասին: Հանգուցեալը իր 80,000 ոսկիի մօտ հարստութիւնը ընտանեացը անդամներուն կտակելով 2,000 ոսկիէ աւելի արժէքով կալուածներ յատկացուցեր էր ազգին: Իր երկու փեսաները կտակին վաւերականութիւնը կը ժխտէին, մինչ որդին Տ. Պետրոս Կարապետեան իբրեւ հօր մը վերջին և նուիրական կամքը յարգող հարազատ ազգին իրաւունքը յարգուելու կողմն էր: Գատը տեղի ունեցաւ յուլիս 20ին Պոլսի ռուս հիւպատոսարանին մէջ և շահուցեալ Տ. Պետրոս Կարապետեանի կողմէ: Արարկիրի ազգատիկ աղաք, Երուսաղէմի վանքը ու Գահիրէի դպրոցը պիտի տիրանան այդ 2,000 ոսկիի գումարին, կտակակատարին կամքին համաձայն:

—Մանչէսթըրի հայերը ծանուցեք են պատրիարքարան թէ Իզմիրի Ս. Ներսէսեան որբանոցի հոգաբարձութեան հետ համաձայնած են, նոյն հաստատութեան մէջ 10 որբուհի և եօթը որբի ծախքն ստանձնելով: Մանչէսթըրի հայ վաճառականներուն այս ողորմասէր ընթացքը թելագրիչ օրինակ հանդիսանալու է Եւրոպայի ուրիշ կողմերու հայ առևտրական կեդրոններու, ինչպէս Մարտիկա եւ այլն:

—Պոլսի Պատրիարքին փոխանորդ Գաբրիէլ ձէվահիրճեան անուն ապուշ վարդապետին և Իզմիրի առաջնորդ Ներսէս վարդապետ Ասլանեանին եպիսկոպոս ձեռնադրուելու համար շլմիածին երթալնուն հրամանը ելեր է զատական նախարարութենէն: Չենք գիտեր թէ Հայրիկ պիտի համարձակի՞ իրաջը բարձրացնել յիշեալ պամպառակ փոխանորդին գլխուն վրայ:

—Միսինարները տեսակ մը բարեգործութիւն կընեն հիմակ: Տուածնին ետ կառնեն և ուրիշին կուտան: Այսպէս, Վարազայ վանքին որբանոցին հոգաբարձութենէն ետ առեր են եղները զորք իրենք տուած էին, ու զանոնք նուիրեր են աւելի կարօտ հաստատութեան մը Ս. Գրիգորի վանքի, ուր աղջկանց որբանոց մը պիտի բացուի:

—Մր. Ալլէն, Վանայ ամերիկացի միօթոնարը որ Ամերիկա կը զառնայ, հոն հիմնած է որբանոց մը, ուր 350 մանչ և աղջիկ որբեր կը խնամուին: Մր. Ալլէն կըսէ թէ յիշեալ տղոց թոյլ կը տրուի ազգ. եկեղեցի յաճախել, և հայ եկեղեցիի հոգեւոր երգեցողութիւնները զաս առնել և կարգալ որբանոցին մէջ:

ձիշդ տեղն է հարցնել Վառնայի հայ որբանոցին հիմնադիր

Պ. Արիւխանեանցի թէ ինչու իր խնամքին տակ գտնուած 10—15 հայ որբերը միայն բողբոսականներու ժողովարանը կը սանի, ու միջոց չընծայեր հայ որբերուն որ իրենց ազգային եկեղեցին ալ այցելեն:

—Տեղույս ազգատախնամի մասին մեր վերջին թիւով հրատարակած գրութեան մէջ Պ. Ս. սկզբնատառով ակնարկուած անձը Գէորգ Սիմօնեանն է, որուն կատմամբ, կիմանանք թէ, զանգատագիր զրկուած է Պատրիարքարան:

—Ազգ. վարչութեան վերջին որոշման համեմատ, մինչեւ օգոստոս 1 պայմանաժամ տրուեր է նշանաւոր յելուզակ Գրիգոր Գարակէօզեանի՝ ազգ. վարչութեան վերջին առաջարկները կամ ընդունելու, կամ մերժելու: Եթէ չպատասխանէ կամ մերժէ, վարչութիւնը իրեն կը վերապահէ զատ բանալ յիշեալ առաջարկին դէմ:

—Պատրիարքարանը մերթ կենդանութեան և կորովի վաղանցուկ շրջաններ կուենայ: Գուրապէլէնի հոռուական շարժումին պետ և առաջնորդ Ամբակում վարդապետը Պոլսի բերուեր է: Իսկ Վանայ մէջ վերջերս հայի բաշխման խնդրին համար կրօնափոխ ըլլալ ուղղորդուող համարտիչները չփոխելու հրաման եղեր է:

—Նոր Ֆէրքէն մը Մարաշի մէջ, Տեղույն հայ բողբոսականներու ազօթարանին սարկաւազ, կանամբի, չորս—հինգ զակի տէր, պղնձագործ Թօր օղլու Համբարձում անուն անձը բողբոսականաց իրական որբանոցին մէջ պատասպարուած 11 տարեկան հայ որբուհի մը բռնաբարեր է: Աս սրիկան ձերբակալուեր է ու պիտի դաւուի:

—Էքսի իրաւաբանական վարժարանի այս տարուան լիսանոթներուն մէջ կը գտնուի հայ երիտասարդ մը Պ. Մարտիրոս Կիւմշեան, որ յաջող քննութեամբ ստացեր է իր վկայականը:

—Կիրակի գիշեր, ժամը տասնին մօտ, Վառնաի մէջ երկրաշարժի ցնցում մը զգացուեցաւ, առանց ու է վնաս մը պատճառելու:

—Օգոստոս 1ին Պոլսի մէջ վերջտին հրատարակուել սկսաւ «Արեւելք» օրաթերթը, որ երկու տարիէ ի վեր խափանուած էր: Այս առթիւ «Մարիքա» նորէն կը փոխէ իր մորթը ու շարաթաթերթի կը փոխուի:

—Պատրիարքարանի կողմէ զաւառներու մէջ ցարդ բացուած որբանոցներուն ամսէ աւմիս զրկուած գումարն է 214 ոսկի: Ասիկա ցոյց կուտայ թէ գէթ որբերու խնամքի գործին մէջ պատրիարքարանը քիչ շատ փութաշանութիւն ու հոգածութիւն կը դնէ:

—Ամերիկացի մը 60 ոսկի նուիրեր է Աստուածաշունչի ընկերութեան որպէսզի այս գումարին չափ գրաբար Աստուածաշունչ նուիրուի հայ եկեղեցիներու և դպրոցներու : Ամերիկացին աւելի ազէկ չէ՞ր ընել այդ գումարը հայ որբանոցի մը յատկացնելով :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

ՊԱՏԵՐԱԶՄԸ

Վերջին հեռագիրները կը ծանուցանեն թէ Ամերիկայի պայմաններն ընդունուած ըլլալով Սպանիոյ կողմէ, Մ. Նահանգաց կառավարութիւնը հրամայած է դադարեցնել թշնամութիւնները : Տուր և Սամուըն ծովակալներուն պաշտօն յանձնուեցաւ վերջ տալ պաշարման ի Գուպա և Մանիլա : Զօրավար Շաֆթըր, Սանթիակոի յաղթականը, յայտնեց թէ ընդունած է թշնամութիւններու դադարումը ծանուցանող հեռագիրը : Զօրավար Մայլս դեռ պատասխանած չէ :

Գուպաի ապստամբներուն ժողովն ալ ընդունած է թշնամութեանց դադարումը :

Բոլոր այս լուրերը ցոյց կուտան թէ սպանո-ամերիկեան պատերազմը հանած է իր վախճանին, ենթադրուածէն շատ աւելի կարճ ժամանակի մէջ :

Արտաքին գործոց նախարար Պ. Տէյլայ պէս կը ծանուցանէր խաղաղութեան ընդունուելը կառավարութեան կողմէ :

«Համաձայնեցանք յիշատակագրի մը վրայ որ կը միացնէր հաշտութեան դաշնագրի մը բանակցութեանց մէջ առաջարկուած պայմանները, ընդ որս Գուպաի և Բոնթո Ռիքօի պարպուելը, և կը յուսանք որ այս յիշատակագիր պիտի գործադրուի» :

Հոսմի «Թրիպունան» կըսէ թէ Վատիկանը յազատել թըղթակցութեան մէջ է Ուաշինկթընի պապական նուիրակին և սպանիական դեսպանին հետ, հաշտութեան պայմանները փոխելու համար այնպէս մը որ ֆրանս չհասնի Մ. Նահանգներուն թողուելիք երկրին մէջ բնակող կաթոլիկներու կրօնական շահերուն :

Ուաշինկթըն հեռագրուած է թէ Մաքսիմօ Կոմէլ պատմաբանը և Գուպաի հանրապետական կառավարութեան անդամները Սանթա-Բարաի մօտ ժողովը գումարեր են որուն մէջ վաւերացուել է Գալիքսթօ Կարսիտի խղովը զօրավար Շաֆթըրի հետ :

Միւս կողմէ, Փիլիպպիններուն մէջ ալ ապստամբներուն յարաբերութիւնները կը շարունակեն ձգտուած մնալ ամերիկացոց հետ :

ցոց հետ : Լուրի մը նայելով, Ակուինալտօի ազգեցուցութիւնը սկսած է նուազիւ ապստամբներուն մէջ, անանկ որ նաւ մը միշտ կը սպասէ եղբր ի հարկին ապստամբապետին փախուստը դիւրացնելու համար :

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Եւթնէնէ եկած լուրերը կացութիւնը կը ներկայացնեն իբրեւ շատ ծանր : Արաբները անդադար կը խոչտանգեն թուրքերը : Օսմ. կառավարութիւնը օգնութեան մեծաթիւ զօրք կը զրկէ : մայիս ամսէն ի վեր, 10,300 զինուոր զրկուած է Եւթնէն :

— «Թան» հեռագիր մը ունի Պոլսէն թէ Սուլթանը հրաւիրած է Ֆէրիտինոս իշխանը, Մաուրիտիո իշխանուհին և Պորթի իշխանը Պոլիս երթալ սպասեմբեր 8ին, պուլկար նորակերտ եկեղեցիին բացման ներկայ գտնուելու համար :

— Պէրու թէն կը գրեն թէ յուլիս 20ին ս'սեր է կառուցուել այն նաւամատոյցը որ պիտի ծառայէ Գերմանիոյ կայսեր ընդունելութեան :

— Զրոյց կը շրջի թէ Բունաստանի թագաւորը՝ Աթէնք դարձած ատենը հո'տեմբեր ամսուն այցելութիւն մը պիտի տայ Սուլթանին ի Կ. Պոլիս :

— Վիլհէլմ կայսրը շնորհակալութիւն յայտնեց Սուլթանին բոլոր այն կարգադրութեանց համար զորս հրամայած էր՝ գերման վեհապետին հետեւորդներուն բնակութեանը ու փոխադրութեանը մասին՝ Երուսաղէմ ընկելիք ուղեւորութեանը միջոցին : Հաղորդեց է նաև Սուլթանին թէ Պաղեստին ու Եգիպտոս ճամբորդութեանը համար համաձայնած է Գուքի ընկերութեան հետ որ կառք ու օթեան պիտի հայթայթէ կայսեր հետեւորդներուն :

Խ Ո Ւ Ն Լ Ո Ւ Ր Բ Ի

Անգլիոյ արտաքին գործերու խորհրդական Պ. Բըրըլըն Հընդկաստանի փոխարքայանուանուել է :

— Անցեալները աննպաստ զբոյցներ շրջեցան Պապին առողջական վիճակին վրայ, որոնք յետոյ հերքուեցան : Այս անգամ սակայն, եղանակին տարութեան հետեւանօք, Ս. Պետրոսի յաջորդը աղիքներու թեթեւ խառնուքներ զգացեր է ու յետաձգեց է իր ունկնդրութիւնները իր բժիշկին պատուէրին հպատակելով : «Սոսերվաթօրէ Բօմանօ», այս լուրն հաստատուով, կաւելցնէ թէ ընտել մտահոքիչ չէ պապին վիճակը :

— Հրամանատար Էսթէրհային եղեռնագատ ատենին առջեւ դատուել կը պահանջուի հարցաքննիչ դատաւոր Պ. Պերթիլիւսի կողմէ :

— Նախորդ Միլան արքան կը շարունակէ իր շահատակութիւնները Սերպիոյ մէջ : Այս անգամ յաջողեց է Սքուբըինաին քուէարկել տալ տասը միլիոն ֆրանքի փոխառութիւն մը, զոր ազգային պանքան շրջաբերութեան պիտի հանէ պանքոմոսի ձեւով : Այս գումար պիտի յատկացուի նախարարութեան և Միլանին դրամական պէտքերուն : Այս լուրը մեծ յուզում պատճառեց է սեղանաւորական շրջանակներուն մէջ :

— Ռուս դեսպան Պ. Եատովսքի՝ անպայման արձակուող մը ստանալու համար իր պնդումին հակառակ՝ հրաման ստացեր է իր կառավարութեանէն խնայել Պելկարատ դառնալ և յայտարարել սերպ կառավարութեան թէ Ռուսիոյ ու Սերպիոյ միջեւ բարուք յարաբերութեանց համար անհրաժեշտ է որ նախորդ Միլան արքան հեռանայ, որուն ներկայութիւնը Պելկարատի մէջ դժբախտ մըն է իր՝ Ալեքսանտր Գիտուած խոստման :

— Սերպ կառավարութիւնը, որուն յարաբերութիւնները Պալքանի միւս տէրութիւններուն հետ երթալով կը ձգտուին՝ Միլանի Պելկարատ դառնալէն ի վեր, Սերպիոյ « սահմանազուխները փակել է գաբատաղջիններու զաղթականութեան առջև, պարապ գետիններու սաստիկ նուազութիւնը պատրուակելով, և հրաւիրեց է Գարատաղի կառավարութիւնը ալ ևս անցազիր չը յանձնել Սերպիա երթոցողներուն :

Հ Ե Ր Ք Ո Ւ Մ

Աղքատախնամ ընկերութեան նախկին ատենապետ Պ. Գր. Սիմոնեան նամակ մը գրելով մեզ կը յայտնէ թէ Պ. Գ. Փ. ը չէ որ հաշիւ մը ունեցած է հացադործին հետ, հասցալ այդ պարաքին տէրը ուղղակի ընկ. նախորդ ատենադպիր Պ. Գ. Սիմօնէի հետն է :

Մ Ե Ր Բ Յ Ժ Ա Ն Ո Ր Գ Ի Ն Ե Ր Ո Ւ Ն

Բաժնեգին ստանալու համար մեր բաժանորդներուն յաճախակի հրաւերներ ուղղելէ միշտ խորշած ենք : բայց ահա Ա. վեցամսեան բոլորեցինք, ու գեռ մեր բաժանորդներուն մէկ կարեւոր մասը չի փութար իր պարտքը վճարել : Հասկցողին համար այսչափը բաւական կը կարծենք :

Ն Ա Ր Ա Ն Պ Ե Յ Ա Մ Ի Ր Ա Ն Ե Ա Ն

Մ Ի Ի Կ Ի Ե Ի

Թագաւորական Ակադեմիային Վկայում

Կուտայ դաշնամուրի և ուրիշ նուագարաններու և երգի դասեր թէ՛ գործնականը թէ՛ տեսականը, նաև Երաժշտութեան պատմութիւն :

Հասցէն Պատ. Ամիրխանեանցի բնակարանը :

—)(—

Ն. ՍԻՍԱԿԵԱՆ
Նկարիչ-Լուսանկարիչ
Պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան թէ Տօպրիչի մէջ լուսանկարչատուն մը հաստատած է ուր բացի ամէն մեծութեամբ լուսանկարներէ, կը պատրաստէ նաև իւզաներկ և գարաքալէմ պատկերներ :
Այլ ևս այլ քաղաքներէ անոնք որ կը փոփաքին իրենց իւզաներկ կամ քաղաքալէմ պատկերը ունենալ, փափկութեամբ եւ ճշգրիտ նմանութեամբ գծուած, թող փութան զրկել իրենց լուսանկարը յիշեալ լուսանկարչատունը, Գիւնբը յոյժ չափաւոր : 2—10

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
Ս. ՍԱՊԱԶ-ԳԻԼԵԱՆ
—)(—
ԵՒՐՈՊԵԱՅԻ ՎԱՂԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԻ ԾԵՏՈՅ
—)(—
ԳԻՆ Է ՃՐԱՆՔ
Կը վաճառուի Եարժուրի Խմբագրատունը :

ՍՏԵՓԱՆ ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ
Կ Ո Շ Կ Ա Կ Ա Ր
Մուսալլա, հաճի հասան ազաի օթէլին տակ
—)(—
Ճաշակաւոր, սոկուն, ձեւաւոր կոշիկ շինել տալ ուղղը պէտք է գրիմէ Պ. Ստեփան Խօրասանճեանի, որուն ճարտարութիւնը մէկ վորձով երեւան կելլայ :
Գիւնբը դիւրամատչելի :

ՃԱՇԱՐԱՆ ԵՒ ԶԲՕՍԱՐԱՆ
—)(—
ՀԱՃԻ ԲԱՆԱՔՈՒՆ ՃԻՇԴ ԴԵՄԸ
Կը բանեցուցէ Պ. Տիգրան Թիւֆիկի-նեան եւ ընկ. ր

Արհեստին մէջ կատարելութեան հասած երիտասարդ հայու մը ձեռնարկ սարքուած այս հովասուն, մաքուր ու զեղջական հաստատութիւն ոչ միայն պատիւ կը բերէ հայ ճաշակին, այլ ևս մեծ խթան մը կը ըլլայ որ հայ ու օտար փափկակերներ իրենց գարնանային ու ամառնային ժամադրաւոր մը ընեն զայն գրօնելու և ճաշելու : Պոնտոսեան, արտօրար հովերուն ու Սեւ ծովի կապոյտ տարածութեան առջեւ :
Հակառակ այս հրապուրիչ տակելութիւններուն, յաճախորդները պիտի գտնեն յոյժ դիւրամատչելի գիւնբը թէ ըմպելիքի թէ կերակուրիւնրու մասին : 18

« Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ »

Վառնաի մէջ կը վաճառուի Մուսալլա, Թահմիլ Կեղիպէօյի քանի խանութը, եւ Ապարբրանման մզկիթին դէմը հայկական գրատունը, Ա. Զարբանէլեանի քով :

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ, «ՇԱՐՃՈՒՄ»
—)(—
Կը տպագրուին ամէն լեզուէ այցեատման, հասցեատման, նամակագրութիւն, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ, ինչպէս նաև պրօշիւռներ :
Գիւնբը յոյժ դիւրամատչելի : Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին :

Սոցիալական «Взаимность» Варна